

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գին 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ուսն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Միծաղել թէ զարմանալ. Բիւսմարկ.— Ներ-
քին ՏԵՍԻՍԹԻՒՆ. Գաւառական կարծիք պօլի-
տեխնիկումի մասին. Նամակ Պարմից. Նամակ
Թեւալից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
սեր.— ՍՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԹԻՒՆ. Խալամ և պա-
տերազմ. Նամակ Թիբրեյայից. Նամակ Ամերի-
կայից. ՀԵՐԵՎԱՆԻ ԹԻՒՆՈՒՄ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Շվեյցարական
ազգային տօները:

ԾԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Անհատ, կատարի թշնամութիւն քա-
ղաքի օտար ազգերի դէմ և յանկարծ,
անպատեհ կերպով փոխել խօսքը, որտեղ
կարելի է տեսնել այսպիսի քամէլէտնու-
թիւն, եթէ ոչ Սուլթանի օրհանի էջը-
րում: Նրէկ հայտնաբեր, զրպարտութիւն,
այսօր բարեացակամութիւն, մի փոքր ար-
գարութիւն: Ափշած ընթերցող կնիք է
առնում և առաջին հարցը, որ ծագում է
նրա մէջ, այն է, թէ երբ էր Սուլթանի
սուա ասում, երբէ՞ թէ այսօր:

Ահա այդ անշնորհ շանգամանքներից
մէկը: Յուլիսի 14-ի համարում «НОВОЕ
Время» տպել է մի մեծ յօդուած, «Հա-
րաւից» վերնագրով, որ բռնել է ամբողջ
բանասիրական բաժինը: Թորոնթապիր
Բոգանով Կիւսիօօսկում ակնատես է եղել
մի այսպիսի տեսարանի: Գնում են երկու
հայ աւաշներ երեխաներ, նրանց հետ է
մի փոքրիկ ռուս երեխայ: Հայ երեխաների
դայեանքները ամեն տեղ ռուս կանայք են
և չը կայ մի հայ ընտանիք, ուր դայեակի
պաշտօն կատարէր հայուհին: Նրեխաները
պիտի անցնէին մի փոքրիկ առուակից: Նա
հա հարգանքով տեսնում է, որ հայ երե-
խաները մեծ հոգատարութեամբ և զգու-
շութեամբ անց են կացնում ռուս երեխա-
յին, ու ընկնում է խոր մտածութիւնների

մէջ: Տեսարանը նրա մէջ զարթեցնում է
«ռուսացման» հարցը, որ մինչև այժմ Կատ-
կովի յանձնարարած միջոցներով է առաջ
տարվում: Նա կատարվում է հրաշքի նման
մի բան: Նրեխաները Սուլթանի աշխա-
տակցին հասկացնում են, որ ռուսացման
այդ սխտեմը լաւ է. նրանք իրանց սի-
րուն տեղով, իրանց ընկերասիրութեամբ
ցոյց են տալիս, որ մեղմութիւն է հար-
կաւոր, որ իւրաքանչիւր ազգ ապրելու
բարոյական իրաւունք ունի:

«Ամեն տեղ, XIX դարում, մենք տես-
նում ենք բազմազան զարուծիւն առնող
Վազարոսներ», ասում է Բոգանով.— երեք
օր զազալի մէջ էր և արգէն փոսում էր,
բայց հնչեց ժամը և նա ձեռքերն ու ոտ-
քերը պատանքի մէջ, դուրս է գալիս գե-
րեմանի այրից. մի քանիները նրան ող-
ջունում են, միւսները անխնայ են: Լա-
տիները, ֆինները, լեհերը, հայերը,
րուսները, չեխները, նրանցից առաջ յոյ-
ները, սերբերը և բոլորները—ամենք
կանգնել են կամ այժմ կանգնում են մի
տեղ, որ չես իմանում թէ ինչ է—կեանք
թէ մահ. բայց նրանք բոլորովին չեն ու-
զում յետ գնալ իրանց դադարը և տեղ
են պահանջում ապրողների մէջ: Ինչ
պէտք է անել: Թորոնթապիր ասում է,
որ պէտք է ուրախանալ այդ երևոյթով և
օրինակ է բերում մալուր բանաստեղծ
Նեպոկրոֆին: Այդ տաղանդաւոր մարդուն
պէտք էր խրատուել, վարձատրել և ոչ
թէ հրաշածել: Ազգութիւնները կարող են
հաշտ ապրել, սիրով շփվել միմեանց հետ,
եթէ միայն նրանց յարաբերութիւնները
սուր չը լինեն: «Նրանք, այդ փոքրիկ և
թոյլ ազգութիւնները «վերածնվում են»,
Վազարոսները—բարայրելի մուտքի մօտ
են կանգնած. և ի՞նչ, պէ՞տք է, որ մենք
էլ չփութենք այդ տեսարանից աւարտա-
ցիներին նման, թէ՞ Գրիստոսի պէս պիտի
ասենք երկմիտ Մարթաներին. «Մի՛ վշտա-

ցիր, քոյր, քո եղբայրը մեռած է, այլ
միայն քնած է»: Նա մի՞թէ մեռել է ազն-
ւութիւնը մարդկանց սրտերում և մի՞թէ
մեզ մօտ յարուծիւն առնող Վազարոսները
չեն տալ մեզ էլ նոր հերոսներ, ինչպէս են
Բազարոսին, Բարկայ, չեքսոմօրեան Լա-
զարեկը:

Այս բոլորը շատ լաւ: Բայց ո՞վ պիտի
հաւատայ այդ բարի խօսքերին ու մտքե-
րին, որոնք երևում են ոչ թէ մի փոքր ի
շատ է մաքուր օրհանում, այլ այնտեղ,
ուր ամենից խիստ կերպով ամեն օր, ա-
մեն ժամ ոտի տակ արթնում են մարդա-
սիրութեան, եղբայրութեան զազափար-
ները, ուր իւրաքանչիւր սող, իւրաքան-
չիւր տառ մի մի թոյն է, որ ոչ թէ չէ
մօտեցնում մարդկանց, այլ օտարացնում է
նրանց, հեռացնում միմեանցից և սովո-
րեցնում, որ նրանք մի յարկի տակ ապրող
եղբայրակիցներ չեն, այլ թշնամիներ: Լա-
ն է, ի հարկէ, մի անգամից հասկանալ
սխալը և այլ ևս չը հետեւել այդ վայրե-
նի ուղղութեան: Բայց Սուլթանի այդպիսի
գործիչ չէ. կարող ենք հաւատացած լի-
նել, որ նա վաղը կը ծնէ այն, ինչ այ-
սօր ասաց նրա աշխատակիցը: Ահա այդ է
պատճառը, որ այդպիսի յօդուածագիր
տեսնելով «НОВОЕ ВРЕМЯ»-ի մէջ, մենք
մեզ հարցնում ենք. ծիծաղել թէ զար-
մանալ:

ԲԻՍՄԱՐԿ

Բիւսմարկն էլ մեռաւ...
Վազարոսներ, մեր զարի նշանաւոր և տեղե-
րաչափ գործիչն հետեւեց մի ուրիշ նշանաւոր
և նոյնչափ տիեզերաչափ, բայց ուղղութեամբ
նրան բոլորովին հակադիր գործիչ, իշխան Բի-
սմարկ, որի ամբողջ կեանքը, նուիրված էր շե-
րկալի և արեան» գաղափարի յաղթանակին, որի
ամբողջ յիստուն և ճինգ ամենայ պատական գոր-
ծունէութիւնը միայն մի նպատակ, մի ձգտ-
ւածք:

Չըջանում բուրժուան գործընտրում է: Նա ընտ-
րում է իր միջից չորս հոգի և նրանց է յանձ-
նում երկրի գործերը: Այս չորս հոգին յայտնի
են պատմութեան մէջ չորս պարոն—Messieurs
les Quatre անունով: Երանաւայ պատերազմը
Նիւլատեկին վնաս չէ հասցնում: Վետֆալի կոնգ-
րէսը հաստատում է չվեյցարական կանտոնների
անկախութիւնը և յայտարարում է Նիւլատեկի
իշխանութիւնը անկախ Պրանսիայից:

Նրբի գիտնականներից մէկը (Montmollin), որ
երկար տարիներ նուիրվել էր ազգային պատ-
մութեան ուսումնասիրելուն, սկսում է երազել,
որ Նիւլատեկը անպատճառ անկախ հանրապե-
տութիւն է դառնալու: Սակայն յենովելով իր
արած հետազոտութիւնների և պատմական էփո-
լուցիայի վրա, նա վազածամ է համարում հան-
րապետութիւնը: Նա ասում է, որ Նիւլատեկը
դեռ պէտք ունի մի իշխանի: Վերջինս պէտք է
իր դիրքի համապատասխան ընդունալութիւն-
ներ ունենայ, որ կարողանայ օտար պետու-
թիւններին ստիպել յարգել Նիւլատեկը: Իշխանը
երբեք չը պէտք է կախում ունենայ ֆրանսիա-
կան թագաւորներից, որոնք բացի վնասից, ու-
չինչ չեն տուել Նիւլատեկին: Ընտրութիւնն ընկ-
նում է Վիլհելմ III-ի վրա, ծագումով գերմա-
նացի: Գերմանական ազգեցութիւնն սկսում է
18-րդ դարու սկզբից: Պրուսական Բրանդե-
նբուրգեան տոնի իր ձեռքի տակ է վերցնում
Նիւլատեկի իշխանութիւնը: Նիւլատեկում ներ-
քին կռիւներ են տեղի ունենում: Ազատ մտա-
ծողներն ուզում են միանալ Շվեյցարիայի հետ,
մինչդեռ պահպանողականները, ազնուականները
ուզում են մնալ պրուսական իշխանութեան
տակ: Պրուսական իշխանութեան ցանկացողները
— քաղաքները, որ կողմն էր ամբողջ, տա-
նում են յաղթանակ: Նիւլատեկը երկունս է
տալիս Բրանդենբուրգեան տանը: Պրանսիան, որ
երկար տարիներ իշխել էր Նիւլատեկում, վերաւո-
րում է: Լուի XIV կտրում է իր յարաբերու-

տունն ունէր—բացարձակ, միապետական, ան-
պայման իշխանութեան զարգացումն և տիրա-
պետութիւնը: XIX դարի երկրորդ կեսից սկսած,
ոչ միայն Եւրոպայում, այլ կարելի է ասել ամ-
բողջ աշխարհում բազմազան ոչ մի նշանաւոր
դէպք չէ տեղի ունեցել, որի հետ կապված չը
լինի Բիւսմարկի անունը: Գրեթէ նրա կենսագրու-
թիւնը կը նշանակի գրեթէ բազմազան աշ-
խարհի ամբողջ կրթագրական պատմութիւնը:
Թողնելով առ այժմ այդ նպատակը, թողնելով
մի ուրիշ անգամի Բիւսմարկի պետական և ընդ-
հանուր գործունէութեան ընդալատութիւնը,
մենք շտապում ենք տալ նրա համառօտ կեն-
սագրութիւնը:

Օտոմոնոպոլ-Լէօպոլդ իշխան Բիւսմարկ ծն-
վել է 1815 թվ. ապրիլի 1-ին, Պրուսիայի
Բրանդենբուրգ նահանգի Ենհաուզեն կոչված
տեղում: Նրա տոնիւր ամենահին տոններից մէկն
է. նրա բոլոր նախնիները Բրանդենբուրգեան
մարզապետների հաւատարիմ ծառաներն էին, ո-
րոնց սէրը դէպի միապետական սկզբունքը,
դէպի զինուորական ծառայութիւնը, դէպի դէն-
քը և համապետի փայլը՝ ժառանգաբար ան-
ցել է իրանց հուշակաւոր յայրորդին: Միայն Բի-
սմարկի հայրը, հակառակ ժառանգական յառ-
կութեան, ոչ մի կողմ չէր դրում դէպի զի-
նուորական ապագայը և չուտով թողնելով ծա-
ռայութիւնը, մեծ եռանդով անհնաւոր եղաւ
զինուորական: Նա ամուսնացած էր տա-
ղանդաւոր հրապարակախօս-պրոֆէսոր Մենկե-
նի աղջկայ հետ, որի վրա նայում էին իբրեւ մի
ժառանգի վրա, որովհետեւ նա ծանօթ էր Վոլ-
տէրի և Բուստայի մտքերին: Իբրեւ կրթված մայր,
նա լաւ դաստիարակութիւն և ուսում տուեց
իր զաւակներին. դերմանական կայսրութեան
ազապա կանցէլլըր նրա չորրորդ որդին էր, մի
յամառ և անխուժ ընտելեան տէր մանուկ, ո-
րին, այդ պատճառով, ստիպելցին տալ դպրոց
7 տարեկան հասակում: Մտիցները ցանկանում
էին պատրաստել նրան դիպլոմատական աս-
պարէզի համար, ուստի և առանձին ուղարկու-
թիւն զարթոյն, որ նա լաւ սովորի նոր լեզու-

թիւնները Նիւլատեկի հետ, որովհետեւ վերջինը
իր կամքով ընկել էր իր ամենախելամիժ թշնա-
մու ձեռքը: Պրանսիան ստիպվում է հաշտվել
իրբի գրութեան հետ: Պրեզերիկ-Վիլհելմ I բա-
րենդուրդութիւններ է մտցնում երկրի մէջ: Երկ-
րագործութիւնը, ինդուստրիան, վաճառականու-
թիւնն զգալի կերպով զարգանում են: Կարող-
ների թիւը շատանում է, գրականութիւնը հարս-
տանում: Լրագրիներ են հրատարակվում Լու-
սաւորութիւնը մտնում է ժողովրդի բոլոր խա-
ւերը: Հիմնվում են դանազան ընկերութիւններ,
բարեբոյրական հաստատութիւններ: Բուրժուան
իր ձեռքն է առնում բազմազանութիւնը, ու-
սումնական գործը, արդիւնաբերութիւնը: Նոր
կառավարութիւնը առանց նրա համաձայնու-
թեան ոչինչ չէ ձեռնարկում: Հոգեւորականու-
թիւնը նոյնպէս խառնվում է բազմազան գոր-
ծերին: Բուրժուական ժողովներին մասնակցում
են և հոգեւորականութեան ներկայացուցիչները:
Ժողովուրդն ստանում է նոյնպէս յայտնի իրա-
ւունքներ: Նա կարողանում է փոխել երբեմն
բուրժուական ժողովների որոշումները, վճիռները:

Ահա Նիւլատեկը 19-րդ դարու չէմբը վրա է:
Նա սպասում է իր աղաւթութեան դարին: Սկըս-
վում է ֆրանսիական յեղափոխութիւնը, որը
ունենում է իր համակրողները, հետեւողները
Նիւլատեկում: Յեղափոխական ոգին տարածվում
է: Երկու հանգամանք օգնում են դործին,—ֆը-
րանսիացի յեղափոխական էմիրախները Նիւ-
լատեկում և յայտնի գործիչներ ընթերցանութիւ-
նը՝ Բուսո, Վոլտէր, Ալամբեր, Միրաբո և ու-
րիշ ֆրանսիական գործիչներ: Ժողովրդի մի մասը
զրկաբաց ընդունում է էմիրախներին և ցառ-
կանում է առաջ բերել մի յեղափոխական իր
երազած իդէալը իրադրեցիւ: Համար—լինել
չվեյցարական ազատ կանտոն: Կառավարութիւ-
նը նախատեսում է յեղափոխական շարժումնե-
րը, դիմում է արմատական միջոցներով: Նա հե-
ռացնում է երկրից ֆրանսիական էմիրախներ-

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ՇՎԵՅՏԱՐԱՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԵՐԸ

Նիւլատեկի կանտոնը
(Վերջ)

Ժամանակի ոգին ծնում է Վիլհելմ Փարէլին,
յայտնի բէֆօրմատօրին, որը ժողովրդի պա-
հանջների, ձգտումների ներկայացուցիչ և առաջ-
նորդող է հանդիսանում: Փարէլն սկսում է իր
կրօնական պրօպագանդան. նա ուղղում է իր
յարձակումները կաթոլիկութեան, անբարոյա-
կան կղերականութեան դէմ: Նա քարոզում է
աւետարանը ամեն տեղ՝ փողոցներում, ժողով-
ներում, մասնաւոր տներում: Նա ցոյց է տա-
լիս կաթոլիկութեան ոչնչութիւնը, նրա ժամա-
նակակից պահանջներին և դիտութիւններին ան-
համապատասխան լինելը և այլն: Կարճ միջո-
ցում Փարէլն իր շուրջն է հաւաքում հետեւող-
ների մի ահագին խումբ: Մի քանի տեղ նրա
համարողները կոպիտ միջոցներին են դիմում:
Նրանք մտնում են կաթոլիկ եկեղեցիները,
դուրս են չլորտում խաչեր, կտրատում զանա-
զան իրեր, փչացնում պատկերները և այլն: Կա-
թոլիկութիւնը ընկնում է. նա տեղի է տալիս
մի նոր, թաքտ, կեանքին համապատասխանող
կրօնի: Ստեղծվում է աւետարանական եկեղե-
ցին, որի գլուխն է անցնում ինքը Փարէլը:
Կրօնը զաւաճում է ազատ: Կրօնական սկզբունք-
ները սկսում են ենթարկվել կրիտիկայի: Կրօ-
նական գրքերը տարածվում են. ով ինչ ուզում
է, կարդում է: Ժողովուրդն սկսում է դպրոց-
ներ բանալ ամեն տեղ: Նիւլատեկում երեան է
գալիս տղարան: Առաջին անգամ տպվում է
ս. գիրքը: Նոր կրօնի զօկարներները տարած-
վում են տպագրական միջոցով: Բէֆօրմատօրի

հերքելով Սկզբնական դարձրեց նա 12 տարեկան հասակում փոխվեց Բերլինի գիմնազիանից մեկը, այդտեղից շուտով անցավ մի ուրիշ գիմնազիա, որովհետև մանուկ Բրամսերը ոչ մի տեղ չէր կարողանում մնալ, ոչ որի հետ չէր հաշտվում, մանաւանդ պրոտական դպրոցներում այդ ժամանակ տիրող խիստ կարգապահական հետ: Նա չարունակ ընդհարումներ էր ունենում իր ուսուցիչներին հետ և ամենքը վաճառվում էին նրա անհանգիստ բնույթից: Այսպէս 17 տարեկան հասակում և արդէն հիմնադրեց ծանօթ էր պատմութեան, լատին կլասիցների, Եկկայի և հայերենի բանաստեղծներ՝ Գոթեի և Երվանդի հետ: Այդպիսի լուրջ պատրաստութեամբ նա մտավ Գետտինգենի համալսարանը՝ իրաւագիտութեան սովորելու: Սակայն գիտութիւնը չատէր գրաւում երիտասարդ, առողջ, ամբողջազգ Բրամսերին: Նա իր ամբողջ ժամանակը անցէր կայնում որսորդութեամբ, զինամարտութեամբ և ձիարշաւով: Մայրական հոգի աչքից հեռու՝ նա անձնատուր էր լինում զուարճութեան, ուսանողական կերպիւմի և շարունակ մեծամարտութեան էր սրա նրա հետ: Ամենազին առիթով նա մեծամարտութեան էր դուրս գալիս և երբ նա թողեց համալսարանը՝ նրա ձեռք բերած գիտութիւնը՝ 27 մեծամարտութիւնն էր...

Տեսնելով իր անաջողութիւնը Գետտինգենի համալսարանում, Բրամսերը մտաւ Բերլինի համալսարանը, ուր յայտնուեց նորից ձեռք բերել կորցրածը: Բայց այդտեղ ևս նա չարունակեց իր նախկին կեանքը, այդտեղ ևս նա ձեռք բաց չէր թողեց զուարճութիւնները: Սակայն քննութիւնները մոտենում էին և նա ստիպվեց տանը, մասնաւոր ուսուցիչների օգնութեամբ պարապել, և 1835-ին կարողացաւ քննութիւն տալով՝ ստանալ դիպլոմ: Առանձին աւարտելուց յետոյ նա ամսօրնայէս մտաւ քաղաքային դատարանը՝ ծառայութեան: Բայց թէ այդտեղ և թէ ուրիշ պաշտօններում նա չէր կարողանում հաշտվել անխառնափառ զինուորային հետ: Նրա անդուստլ կրքերը, անսահմ ընտանոթութիւնը ամեն քայլում անխառնափառ լինելու պատճառով նրան և նա ստիպվում էր շարունակ հրաժարականներ տալ: Վերջապէս, նա որոշեց թողնել Բերլինը, ծառայութիւնը և գնաց գեղջիկ կառավարելու իր հօր կալուածները: Այդտեղ էլ նա իր ամբողջ ժամանակը անց էր կացնում զինուորական երիտասարդութեան շրջանում, խնոցներին և զուարճութիւններին մէջ: Որսորդութիւն, պարեր, կերպիւմ, շուայտութիւն՝ ահա նրա սովորական զբաղմունքը, որի պատճառով նա ստացաւ «der tolle Bismark» (սենթ Բրամսեր) մականունը: Զայրոյթը երիտասարդ Բրամսերի

դէմ՝ դրացի աւատական ամբողջներում ընդհանուր էր նրա վարած չուայ կեանքի համար, բայց նա ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում և շարունակում էր իր զուարճութիւնները: Միայն երբեմն-երբեմն նրա ընկերները վարձանում էին և ծաղրում նրան, երբ տեսնում էին, որ նա կարող էր զանազան փրիսոփայական գրքեր, զլուսարարական Սպինոզայի շարադրութիւնները, Նիւտոնի արդիւնները իր շուայտութեան ժամերում այնու ամենայնիւ պահանջ էր դրում լուրջ մտաւոր աշխատութեան և ջանքեր էր անում լրացնել իր համալսարանական կրթութեան պակասորդը:

Հորը մահը, 1845-ին, արմատական փոփոխութիւն առաջ բերեց նրա կեանքի մէջ: Նա վճռեց ամուսնանալ և խնդրեց Հենրիխ Պուտկամերի աղջկայ ձեռքը, բայց Պուտկամերը հրաժարեց իր աղջկայ ըստը կապել «սենթ Բրամսերի» հետ: Այնու ամենայնիւ Բրամսերի օտարութիւնը և հաստատականութիւնը յաղթեցին ընդդէմ արեւելքներին և ամուսնութիւնը տեղի ունեցաւ 1847-ին: Դրանից յետոյ շուտով փոխվեց և նրա հասարակական դիրքը: Պրոսիայի Ֆրիդրիխ-Վիլհելմ IV թագաւորը այդ միջոցին մի հրովարտակ հրատարակեց սէյմ գումարեղու և Բրամսերը ընտրվելով գաւառական պատգամաւոր, հարաւորութիւն ստացաւ գնալ սէյմը և մասնակցել նրան: Այդ եղաւ 1847-ին և Բրամսերը առաջին անգամ ապարելգ դուրս եկաւ իրեն քաղաքական և հասարակական գործիչ:

Այդտեղից սկսվում է նրա կեանքի երկրորդ շրջանը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՌԱՌԱՅԱՆ ԿԱՐԾԻՔ ՊՈԼԻՏԵՆԻԿԱՌԻՄ ՄԱՍԻՆ

Թէ ինչ նշանակութիւն կունենայ Կովկասում բացվելը պոլիտեխնիկումը, այդ ամենքին հասկանալի է. նրա կատարելիք դերը շատ մեծ է լինելու Կովկասի ժողովրդի մտաւոր և անտեսական ինդուրներում: Մի կողմից նպաստելով բարձրագոյն կրթութեան տարածման, միւս կողմից մասնագէտներ տալով՝ նա միջոց տված էր լինի արդիւնաբերելու այն բնական հարստութիւնները, որոնցով օժտված է Կովկասը: Բոլոր համակարծիք են Կովկասում բացվելը պոլիտեխնիկումի մասին: Կարծիքների տարբերութիւն է առաջ բերել միայն այն հարցը, թէ որտեղ բացվի ապագայ պոլիտեխնիկումը, որպէս զի իր նպատակին ծառայած լինի Քիֆ-լիսը, Բաղուն և Վաղիկավազը, իւրաքանչիւրը ամեն կերպ աշխատում է, որ ապագայ

պոլիտեխնիկումը իր մէջ բացվի: Սակայն այդ երեք քաղաքների կարծիքներով չէ պէտք է բաւականացնել. նշանակութիւն պէտք է տալ նաև Կովկասի միւս քաղաքների կարծիքներին, որովհետև ապագայ պոլիտեխնիկումը բացվում է ոչ թէ միմիայն Քիֆ-Քիսի, Բաղուն կամ Վաղիկավազի համար, այլ նաև միւս կովկասեան նահանգների համար, որոնք նոյնպէս տալու են մեծ թիւով ուսանողներ: Եւ հէնց այս տեսակէտից ուղում ենք արտայայտել և Նրեանի կարծիքը, ի նկատի ունենալով մեզանում մասնաւոր կերպով յայտնված կարծիքները:

Մեր կարծիքով ապագայ պոլիտեխնիկումի համար ամենից շատ յարմարութիւն ներկայացնում է Քիֆ-Քիսը, և այդ բանը մենք պատճառաբանում ենք հետեւեալ կերպով. 1) Քիֆ-Քիսը ներկայացնում է Կովկասի լուսաւորութեան կենտրոն. տարբերակ և անյարմար բան կը լինէր, եթէ ստեղծէին մէկ նոր կենտրոն, հիմնելով պոլիտեխնիկումը—այդ բարձրագոյն դպրոցը—մի որ և է ուրիշ քաղաքում (Վաղիկավազում կամ Բաղուն): Մտաւորապէս աւելի բարձր կանգնած լինելով Քիֆ-Քիսը աւելի հասուն ստեղծ կը տայ, քան թէ Բաղուն կամ Վաղիկավազը: 2) Անհնարով թույլ աւելի ուսումնարաններ, որտեղից աւարտողները կարող են մտնել ապագայ պոլիտեխնիկումը, Քիֆ-Քիսը բնականաբար իւրաքանչիւր տարի կը տայ պոլիտեխնիկումի աւելի սաներ: 3) Քիֆ-Քիսի կենտրոն, աւելի է ծան լինելով՝ հարաւորութիւն կը տայ ուսանողներին ապրել միջակ միջոցներով, և այդպիսով ուսանողները ազատված կը լինեն այն նեղութիւններից, որ նրանք, չնորհիւ նիւթական միջոցների սակաւութեան, կը կրեն անկողնած միւս քաղաքներում, որտեղ կենտրոն աւելի թանգ է: Եւ ահա այս պատճառները առաջ բերելով՝ իրաւունք ենք համարում մեզ, իբրև երևանցիների կարծիքների արտայայտութիւն, մեր ձայնը միացնել այն հիմնարկութիւնների և անհատականութիւնների ձայներին, որոնք աշխատում են ապագայ պոլիտեխնիկումը Քիֆ-Քիսում բացված տեսնել:

Լ. Մէլքե-Օհանջանեանց

ՆԱՄԱԿ ՊԵՐՄԻՑ

Յուլիսի 5-ին Իրկուտսկից մինչև Ուրալի լեռնաշղթան (Չեկաբդինսկ քաղաքը) այժմ կարելի է հասնել 10 օրում: Մինչև մի քանի ամիս այդ ժամանակա-միջոցը էլի կը կրճատվի, իսկ մի քանի կտարոյց յետոյ՝ կանոնաւոր երկաթուղային երթևեկութիւն հաստատվելուց յետոյ, նա, երբի, կը հասնի 5 օրի: Իրկուտսկից մինչև Ուրալի նոյնքան ճանապարհ է, որքան որ, օրինակ,

Պետերբուրգից մինչև Շուշի կամ թէ Հին-Նախիչևան: Իրկուտսկից մինչև Կրասնո-եարսկ՝ երկրի մակերեսովը շատ թէ քիչ ակնկոծված է, իսկ Կրասնոեարսկից սկսած—գէթ երկաթուղու և խճուղու ուղղութեամբ նա ներկայացնում է նոյն տափարակները և անվերջանալի դաշտերը, որոնք ձեռ ծանօթ են Ուրալից դէսը գրեթէ ամբողջ եւրոպական Ռուսաստանում: Զանազան օրոգիւթիւնը այդ դաշտերի միջոցով՝ վերին աստիճանի ձանձրալի է. հազարաւոր վերստերի վրա չը կայ, կասէք, և մի հատ բըլուր, որի վրա, միանման տպաւորութիւններից յետոյ, ձեր աչքը հանգստանաւ: Երկիրը մերկ է և բուսականութիւնից—անտառներից: Հոյակապ անտառներ, նոյն իսկ անտառներից, եթէ կարելի է այսպէս ասել, անհզը ծովերը յարում են գլխաւորապէս երկրի հարաւ-արեւելքին: Իրկուտսկի նահանգը, հիւսիսից սկսած մինչև Զինա-տանի սահմանները, ուղղակի անտառային ու-կիանոս է, գրեթէ առանց բաց տեղերի: Վատ է՝ գեղապիտան տեսակէտից՝ ճանապարհը Ուրալի վրայով, մանաւանդ, երբ դուք անցնում էք Զեկաբդինսկից դէպի Սամարա: Այդ գծի վրա Ուրալեան լեռները մեծ նմանութիւն ունեն մեր Կովկասի ձորակներ: Երկաթուղու գիծը անընդհատ ուղղվում է ձորակների արանքով, գետակների գալարումների հետ միասին... իսկ չորս կողմից (վազոնի պատճառից) ձեռ նեղում են ձորերի լանջերը՝ պնդված խիտ բուսականութեամբ: Վատ է նմանապէս Ուրալը, երբ անցնում էք Զեկաբդինսկից դէպի հիւսիս-արեւմուտը, օրինակ, դէպի Պերմ քաղաքը, բայց այդ գծի վրա բնութիւնը լաւ է միայն տեղ-տեղ: Տեղի դրութիւնը, այսինքն համեմատական բարձրութիւնը կարելու, նոյն իսկ վճռական նշանակութիւն ունի Սիբիրի համար, գէթ նրա արեւելքի վերաբերմամբ—երկրագործական տեսակէտից: Ցափարակներն առհասարակ չեն մշակվում: Սիբիրի գիւղացիները, որոնք գլխաւորապէս պատկանում են սլաւոն տարրին (տեղական ընկերները—արթիկներն են—դեռ ևս չէ կարելի նստակեաց համարել), փորձի միջոցով եկել են այն եղրակացութեան, որ երկիրը, այդու մշակել կարելի է միմիայն բարձրաւանդակների լանջերում, իսկ տափարակ տեղերում—խօսքը վերաբերում է Ենիսէյի և Իրկուտսկի նահանգներին—հաջը Վարվուտ է—հիւսիսում և ցրտաւոր է դառնում: Դա ուշադրութեան արժանի է հետաքրքիր երեւոյթ է: Ինչպէս, օրինակ, կարծում է, որ բարձրաւանդակ տեղերում երկիրը իբր թէ ենթակայ է օդային բարձր և տաքուկ հասանքների ազդեցութեան, որոնք բերվում են հարաւային ուղիներով:

Պերմի նահանգը, իր հարեան նահանգներով, մեծ նմանութիւն ունի Սիբիրի հետ: Կլիման բարվում է հանրապետութիւն և չլէյցարական կանոն: Նա բաժանվում է 6 գաւառի: Ազնուականութիւն չը կայ, արտօնված քաղաքացի չը կայ, ժողովրդի բոլոր անգամները հաւասար են և ձայն ունեն երկրի բոլոր գործեւում: Բոլոր պաշտօնեաները, առանց բացառութեան, նոյնպէս և հոգեբանականները, իրար վրում են ժողովրդի ձայների մեծամասնութեամբ: Զինուորական ծառայութիւն ընդհանուր է, սըլ-տական զօրք չը կայ: Մամուլի, կրօնի ազատութիւն, սկզբնական ուսումը պարտադիր:

Ժողովուրդը, ձայների մեծամասնութեամբ, ընտրում է երեք վարչական օրգան 1) օրէնդրական, 2) գործադիր, 3) դատաստանական: Առաջինը վարում է մեծ խորհուրդը (Grand Conseil): Ժողովուրդն ինքն է ընտրում այս խորհուրդը—500 հոգի՝ մի պատգամաւոր: Պատգամաւորներն ընտրվում են չորս տարի ժամանակով և կարող են վերընտրվել: Երկրորդը յանձնվում է նահանգական խորհուրդին (Conseil d'Etat): Վերջինս բաղկացած է եօթը անդամներից, որոնց ընտրում է մեծ խորհուրդը վեց տարի ժամանակով: Գաւառական վարչութիւնը կազմված է երեք մասից՝ 1) հաշտարար դատարան (Justice de paix), 2) առաջին փնտառացայի առեան (Tribunal de premiere instance) և 2) երկրորդ փնտառացայի առեան—պալատ (Cour d'appel), որը և վարում է վճռաջինը առեանի պաշտօնը (Cour de cassation): Մեր համառօտ կերպով միջնակց Նիւշտեի կանտոնի պատմութեան զլխաւոր մօմնտները մինչև վերջին 1848 թ. յեղափոխութիւնը: Ամեն տարի մարտի 2-ին կանտոնի տօնում է իր ազատութեան օրը: Այս տարի լրացաւ հանրապետութեան 50-ամեակը. ժողովուրդն այժմ կանդնեցնում է կանտոնի զլխաւոր քաղաքում՝ հանրապետութեան արձանը:

Արձանի և տօների մասին միւս անգամ:

Յ. Իւզաշանց

բին, ազատում է կառկածի Նիւշտեցիներին: Փրեկերի-Վիլհելմ III խոստանում է բարեկարգութիւններ մտցնել: Ժողովուրդը ժամանակաւորապէս խաղաղվում է և թողնում է իր գաղափարը: Նապոլէոն I բարձրանում է Ֆրանսիական գահը: Առաւելեցի թողնումը կայծակի արագութեամբ ջարդում է երեք միապետների դաշինք: Աւստրիան, Պրուսիան խոնարհվում են Նապոլէոնի զէնքի առաջ: Նիւշտեից դառնում է Ֆրանսիական մի հասարակ նահանգ: Նա ուղարկում է իր պատգամաւորներին Պարիզ իր հպատակութիւնը և հաւատարմութիւնը Նապոլէոնին ներկայացնելու: Վերջինս ուղարկում է Նիւշտեի իր ազգական Բերլինի և նրան է յանձնում իշխանութիւնը: Նիւշտեից դարձեալ Ֆրանսիայի ձեռքի տակն է ընկնում: Իբրև Ֆրանսիական նահանգ՝ նա զօրք է տալիս Նապոլէոնին: Այս դրախտումը մի քանի անգ լուրջներից յետոյ, բոլորովին կորչում է Ռուսաստանում: Նապոլէոնի պարտութեան ժամանակ: Այս շրջանում Նիւշտեի շատ նեղութիւններ է և կրում: Երկրի արդիւնաբերութիւնը կանգնում է: Ժողովուրդը աղքատանում է: Վերջապէս Նապոլէոն ընկնում է: 1814—15 թ. հրատարակվում է մի հրովարտակ, որով Նիւշտեից մոտ-նում է չլէյցարական դաշնակցութեան մէջ, ինչպէս 21-րդ կանտոն: Այս դրութիւնը երկար չէ տևում: Նիւշտեից նորից անցնում է Պրուսիայի ձեռքը: Փրեկերի-Վիլհելմ III պահելով իր գերիշխանութիւնը, լայն իրաւունքներ է տալիս Նիւշտեիին: Բուրժուայի իրաւունքները սահմանափակվում են: Երկիրը կառավարելու համար ընտրվում է մի խորհուրդ, որտեղ մասնակցում են ժողովրդի ընտրած պատգամաւորները: Ազատամիտները սրանով չեն բաւականանում: Նրանք ուղում են անկախութեան տեսլիք և կապվել Շվեյցարիայի հետ:

Յեղափոխութիւնն անխառնափառ է դառնում: Ազատամիտներն սկսում են պատրաստվել: Ժողովներ են կազմում, զենքեր են ձեռք բերում:

Ազատամիտները մտնում են ժողովուրդի խաւերը, բացատրում, հասկացնում են յեղափոխութեան անհրաժեշտութիւնը: Յեղափոխութեան կուսակիցների թիւը հեղեղեալ մեծանում է: 1831 թ. սեպտեմբերի 13-ին ազատամիտները տօնում են Նիւշտեի Շվեյցարիայի հետ միացման տարեդարձը (վերս յիշած 1815 թ. հրա-տարակած սահմանադրութեան համաձայն): Տօնից յետոյ ազատամիտները բարձրացնում են ազատութեան դրօշակը: Մի գլխիւ խումբ յարձակվում է Նիւշտեի ամրոցի վրա, ուր ապրում էին պրուսական ներկայացուցիչը և երկրի վարչութեան անդամները: Ժողովուրդը բաժանվում է երկու բանակի: Պրուսիայի բարեկիցները, բաղկացնում օգնութեան են հասնում կառավարութեան: Ազատամիտները իրանց հպատակին չեն համոզում: Կառավարութիւնը և նրա նիւշտեցի բարեկիցները խեղդում են յեղափոխութիւնը, բանտարկում են շատերին, կարծում են գլխաւորներին, մի քանիսին աքսորում են երկրից: Այս անաղովութիւնը չէ վախեցնում յեղափոխականներին: Երկրում մնացած ազատամիտները շարունակում են իրանց սկսած մեծ գործը: Ամեն տեղ տարածում են նրանց գաղափարները: Այն սկզբուրը, որ ժողովուրդը ինքը պէտք է իր տէր լինի, որ կատակական կառավարութիւնը չը պէտք է լինի, ժողովրդականանում է: Ամբոխն սկսում է համարել ազատամիտների բռնած դիրքին, ընթացքին: Կառավարութիւնն սկսում է նրանց հպաձնել: Նա սահմանափակում է ժողովրդի իրաւունքները, դաւաճանելով իր արած խոստմունքներին: Ժողովուրդը զայրանում, գրգռվում է անկողն կառավարութեան դէմ: Ժողովուրդը մօտենում է իր անկեղծ բարեկամներին՝ ազա-տամիտներին և մի առանձին ոգևորութեամբ ժխտում է 1831 թ. և նրա հերոսներին: Ազատա-միտների կուսակցութիւնն ուժեղանում է: Ազատութիւնը դառնում է ամբողջ ժողովրդի ցանկութիւնը: Բաղկացնում ամեն ջանք գործադ-

րում են, որ խանդաբեն նոր յեղափոխութիւնը, բայց անաշույ: Հանում է 1848 թ. ապրիլի ազատութեան փո-ղը հնչում է Լօկից (Նիւշտեից գաւառ): Սըր-տները բախարում են: Հասնել էր դարբնով փայ-փայած, սիրած ազգային գաղափարի իրագործման ժամը: Ազատամիտները բարձրացնում են դաշնակցութեան դրօշակը: Զինված խմբերը գա-ւառներից հաւաքում են ազատութեան դրօշա-կի շուրջը: Իւրաքանչիւր խումբ իր մասնաւոր դրօշակ ունէր, որի վրա գրված էր «Liberté et patrie» (ազատութիւն և հայրենիք): Ցեղա-փոխականների զլխին է անցնում Ֆրից Կուր-վուպիէն: Առաջ, կոչում է առաջնորդը: Զին-ված խմբերը վերցնում են առանց դժուարու-թեան մի քանի գաւառներ և մտնում Նիւշտեի: Առանց արդիւնքի, առանց արեւն թափե-լու խումբը վերցնում է ամրոցը: Ազատութեան դրօշակը մարտի 1-ից սկսում է ծածանել ամ-րոցի վրա: Կառավարութիւնը գլուխը կորցրած լինելով է ամբողջ: Բաղկացնում չեն կարո-զանում ընդլիմնալ: Նիւշտեից վերջին ան-գամ ազատ է հրատարակվում: Ցեղափոխա-կանները ժամանակաւոր վարչութիւն են նշա-նակում Նիւշտեի: Միւս օրը Պրուսիայի ներկայացուցիչ Սիգիսմունդը լինում է Նիւշտեի: Բաղկացնում գոտում են՝ «Կեցցէ լեյզաւորը»: Իսկայն սրանց ձայնը արձագանք էլ գտնում ժողովրդի մէջ: Դալիս են չլէյցարական դաշ-նակցութեան պատգամաւորները, ողջունում են իրանց ազատամիտ եղբայրներին և ընդունում են Նիւշտեից դաշնակցութեան մէջ, իբրև ա-զատ կանտոն: Այդ 1848 թ. մարտի 2-ին էր, այն մեծ օրը, երբ Նիւշտեից ազատված բըռ-նապետութիւնից՝ մեկնում է ձեռքը իր մեծ քրո-ջը՝ ազատ Շվեյցարիային:

Ժամանակաւոր ժողովը՝ կազմված ժողովրդի ներկայացուցիչներից և դաշնակցութեան պատ-գամաւորներից, մշակում է 75 յօդուած: Այս յօդուածների հիման վրա՝ Նիւշտեից յայտա-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13